ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԴԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ (1920-30ԹԹ.)

Քրդական խնդիրը Թուրքիայում երբեք դուրս չի մնացել թե խորհրդային, թե արևմտաեվրոպական արևելագետների ուշադրությունից: Դրվել են բազմաթիվ աշխատություններ, մենագրություններ, որոնք անդրադարձել են քրդերի ծագման, պատմության ընթացքի, սոցիալ-քաղաքական վիճակի խնդիրներին: Սույն հոդվածում մենք փորձ ենք արել անդրադառնալ հանրապետական Թուրքիայում քրդերի սոցիալ-քաղաքական վիճակին անցյալ դարի 20-30-ական թվականներին:

Հանրապետական Թուրքիայի ազգային պետական քաղաքականության հիմքում ի սկզբանե դրվեց ազգայնակենտրոնությունը: Մերժելով երկրում առկա ազգային փոքրամասնությունների, այդ թվում՝ քուրդ ազգաբնակչության գոյությունը՝ քեմալականները որդեգրեցին պանթուրքիստական հայտնի կարգախոսը. «վերափոխել բոլոր մահմեդականներին թուրքերի»[1]:

Այդ քաղաքականությունը փաստացի վավերացվեց 1920թ. հունվարի 28-ին կազմված «Ազգային ուխտում», հոդվածային սրի (կետ 1-ին) «...Օսմանյան կայսրության այն հատվածը, որ մեծամասամբ բնակեցված է օսման-մահմեդականներով՝ միավորված կրոնական և ռասսայական հիմքով՝ մեկ ամբողջություն է, և նրա մասնատումը որևէ պատրվակով անհանդուրժելի է»[2]:

1920թ. Սևրի դաշնագրի կնքումից հետո, երբ ուրվագծվեց ապագա Քրդստան ստեղծելու հեռանկարը, Քեմալ Աթաթուրքը այն որակեց որպես «իմպերիալիստական» սադրանք. «Անգլիան ցանկանում է իր տիրապետության տակ ստեղծել քրդական պետություն և դրանով իսկ հանդես գալ հրամայողի դերում Թուքիայի, Իրանի և Անդրկովկասի նկատմամբ...»[3]:

Ինչպես հայտնի է Սևրի դաշնագիրը առաջին պատմաիրավական փաստաթուղթ է, որտեղ միջազգային դիվանագիտական մակարդակով քննարկվում է քրդական հարցը: Դաշնագրի երրորդ բաժինն ամբողջությամբ «Քրդստան» ստեղծելու վերաբերյալ է: Այստեղ մասնավորապես

նշվում է, որ «երեք պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կողմից պետք է նշանակվի խորհուրդ, որը վեց ամսվա ընթացքում պետք է տեղական ինքնավարության պատրաստի այն վիլայեթները, որոնք ձգվում են Եփրատից արևելք և որտեղ գերակշռում է քրդական տարրը: Միաժամանակ պետք մշակվեն հստակ երաշխիքներ՝ վերը նշված վիլայեթներում մյուս ազգային և կրոնական փոքրամասնությունների անվտանգության համար:

Եթե մեկ տարի նշված վիլայեթների քուրդ ազգաբնակչությունը դիմի Ազգերի Լիգա և ներկայացնի, որ բնակչության մեծամասնությունը ցանկանում է լինել Թուրքիայից անկախ, իսկ Ազգերի Լիգան կհաստատի, որ վերջիններս ի վիճակի են ապրել անկախ, ապա Թուրքիան պարտավոր է հրաժարվել վերոհիշյալ վիլայեթներից: Եթե Սոսուլի վիլայեթի քրդերը ցանկանան լինել քրդական անկախ պետության կազմում, ապա Դաշնակիցները դեմ չեն լինի»[4]:

Այսպիսին է Սևրի դաշնագրի՝ քրդական ինքնավարությանը վերաբերող մասը, որն արդեն իսկ շատ կարևոր երևույթ էր որպես քուրդ ժողովրդի պետական ինքնավարության ընկալման գաղափար: Կարևոր է նաև այն փաստը, որ առաջին անգամ համընկնում էին քուրդ ժողովրդի և Դաշնակիցների շահերը:

Ինչպես հայտնի է Սևրի դաշնագիրը նաև նախատեսում էր անկախ Հայաստանի ստեղծումը և «թվում էր, թե հայ-քրդական դարավոր կնճիռը վերջապես հասնում էր իր ավարտին»[5]:

Ինչպես և սպասվում էր թուրք ազգայնականները լայնածավալ պայքար սկսեցին Սևրի դաշնագրի իրականացման դեմ: Դա արտահայտվեց թուրքական լրատվամիջոցներում, պաշտոնական հրապարակումներում.

«Այն կնքվել է արդեն հոգեվարք ապրող Օսմանյան կայսրության կողմից, սակայն դեռևս մի քանի օր առաջ՝ 1920թ. հուլիսի 18-ին Անկարայում գումարված Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովը (ԹԱՄԺ) հայտարարել էր, որ չի ընդունելու իրենց առաջարկված դաշնագրի պայմանները և հավատարիմ «Ազգային ուխտին»՝ չի հանդուրժի թուրքական հողերի մասնատումը»[6]:

Մուստաֆա Քեմալի և նրա ձևավորած ազգայնական շարժման հիմնական խնդիրներից մեկը Սևրի դաշնագրի պահանջների իրագործումից հրաժարվելն էր: Դա դյուրին խնդիր չէր. չնայած Ռուսաստանի դիրքորոշման կտրուկ փոփոխությանը ի օգուտ Թուրքիայի և ընդդեմ այդ դաշնագրի, քեմալականները գիտակցում էին իրենց առջև ծառացած խնդրի ողջ լրջությունը:

Դաշնագրի ստորագրումից հետո նրանք հարկադրված եղան տակտիկական նկատառումներից ելնելով քրդերի նկատմամբ իրենց քաղաքականության մեջ փոփոխություններ մտցնել՝ փորձելով նրանց իրենց

կողմը գրավել: Առավելապես շահարկելով քրդերի կրոնական զգացմունքները, թուրքերին և քրդերին անվանելով «միասնական կրոնի զավակները», քեմալականները ամեն կերպ աշխատեցին հավատ ներշնչել քրդերին «նոր Թուրքիայի» սահմաններում նրանց իրավունքների հարգման և ազգային քաղաքական վիճակի լիարժեքության մասին:

Քաղաքական այս իրավիճակի ամենահետաքրքիր երևույթն այն էր, որ Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովն ընդունեց աննխաղեսլ, ինչպես նաև հետագայում նմանը չունցող նախագիծ՝ Թուրքայում քրդերի ինքնավարության վերաբերյալ:

1922թ. փետրվարի 11-ին ԹԱՄԺ-ը վավերացրեց հետևյալ 10 կետից բաղկացած այդ փաստաթուղթը.

1. Քուրդ ժողովրդի մշակութային զարգացմանը սատարելու համար Թուրքիայի Մեջլիսը քրդերին ինքնավարության իրավունք կտա, որը պետք է ներառի նրանց բոլոր իրավունքները և սովորույթները:

2. Որպես Գլխավոր նախարար (ինքնավար մարզի նահանգապետ) Մեջլիսը կընտրի այն անձին, որը հեղինակություն է վայելում քրդերի մոտ և երաշխավորված է նրանց կողմից:

3. Գլխավոր նախարար (ԳՆ) ընտրվում է երեք տարով: Սակայն քուրդ ազգաբնակչության մեծամասնության ցանկությամբ նրա իրավունքները կարող են դադարեցվել և Քրդական ազգային խորհրդարանի կողմից նոր ԳՆ-ը ընտրել:

4. ԳՆ-ին, ինչպես նաև նրա տեղակալին հաստատում է Անկարան:

5. Քրդական ազգային խորհրդարանը ընտրվում է Արևելյան վիլայեթների բնակչության կողմից՝ երեք տարի ժամկետով:

6. ԳՆ և Քրդական ազգային խորհրդարանի միջև վիճելի հարցերի առկայության դեպքում վճռական խոսքը պատկանում է ԹԱՄԺ-ին, և երկու կողմն էլ պարտավոր են ենթարկվել վերջինս որոշմանը:

7. Արևելյան վիլայեթների պաշտպանության համար կազմվում է ոստիկանություն՝ Քրդական ազգային խորհրդարանի որոշմամբ: Սակայն այդ մարմնի ղեկավարումն ու վերահսկումը որոշ ժամանակ լինելու է թուրքերի ձեռքում:

8. Քրդական ազգային խորհրդարանի, ինչպես նաև կառավարության գործավարությունը պետք է վարել թուրքերենով: Միաժամանակ իրավունք է տրվում դպրոցներում դասավանդել քրդերեն: Թեև այն պետական լեզու չէ, բայց և այնպես, կարելի է հաղորդակցվել:

9. Քրդական ազգային խորհրդարանը վերահսկում է Արևելյան վիլայեթների կարգուկանոնը:

10. Առանց ԳՆ-ի թույլատրության և հաստատման Քրդական ազգային խորհրդարանը իրավասու չէ տարաբնույթ գործողություններ իրականացնել:[7]

Բնականաբար այս նախագիծը այդպես էլ մնաց թղթի վրա և անմիջապես չեզոքացվեց թուրքական հատուկ ծառայությունների կողմից: Այդուհանդերձ այն ունի կարևոր նշանակություն. նախ հաստատում է քրդական հիմնահարցի գոյությունը Թուրքիայում և երկրորդ՝ հնարավորություն է տալիս մեկ անգամ ևս ընդգծել Քեմալ Աթաթուրքի կողմից իրականացվող «երկակի ստանդարտի» քաղաքականության արդյունավետությունը:

Պետք է նշել, որ քեմալականների քաղաքականությունը՝ քարոզչությունը և խոստումները քրդերին, հատկապես Ազգային Ժողովի որոշ քուրդ պատգամավորներին, անարդյունք չմնացին:

Ուժերի նոր դասավորության պայմաններում, միջազգային մի շարք գործոնների ազդեցության տակ 1923թ. հուլիսի 23-ին ստորագրվեց Լոզանի պայմանագիրը, որը ի չիք դարձրեց քրդերի՝ անկախություն ստանալու բոլոր հույսերը: Եվ ահա, երբ Լոզանից հետագիր ուղարկվում Թուրքիա՝ քրդերի ինքնավարության՝ Սևրի դաշնագրով նախատեսված պայմանները ճշտելու համար, ԹԱՄԺ-ի արտահերթ նիստում Էրզրումի քուրդ պատգամավորը հայտարարում է. «Այս երկիրը պատկանում միայն թուրքերին և քրդերին, ու այս ամբիոնից միայն երկու ժողովուրդի ներկայացուցիչ իրավունք ունի խոսելու՝ թուրքերը և քրդերը»:[8]

Այս ամենի հետևանքով Լոզանում Իսմեթ Ինենյուի գլխավորած պատվիրակությանը հաջողվում է «ազատվել» Սևրի դաշնագրի պահանջներից և սահմանափակվել միայն ազգային փոքրամասնությունների որոշ իրավունքներին վերաբերող պարտավորություններով, որոնց շարքին քրդերը որպես մահմեդական չէին դասվում[9]:

Լոզանի պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո թուրքական իշխանությունները կտրուկ փոխում են քրդերի հանդեպ իրականացվող քաղաքականությունը: Ի տարբերություն առաջինի՝ երկրորդ գումարման ԹԱՄԺ ոչ մի քուրդ պատգամավոր չի ընտրվում, իսկ նախկիններ ձերբակալվում և հանձնվում են զինվորական դատարանին[10]: Թուրքիայի կողմից իրականացվող ազգայնական քաղաքականությունը և ազգային փոքրամասնությունների իրավունքների անտեսումը արձանագրվում է նաև Թուրքիայի Հանրապետության 1924թ. առաջին սահմանադրության մեջ:

«Թուրքիայի Հանրապետության բոլոր քաղաքացիները՝ անկախ կրոնական և ռասսայական պատկանելիությունից՝ թուրքեր են»:

«Անձի անձեռնմխելիությունը, խղճի, մտքի, խոսքի, տպագրության ազատությունն ու իրավունքը պատկանում են միայն թուրքերին»[11]:

Այդպիսի անհանդուրժողականությունն ազգային փոքրամասնությունների նկատմամբ վերաճեց ազգային պետական գաղափարախոսության, որը և օգնեց Թուրքիային տարածաշրջանում ինքնահաստատվել և հետագայում հաջողությամբ խաղալով համաշխարհային երկու

համակարգերի առճակատման վրա՝ ապահովել իր առաջխաղացումը: Չնայած քրդերը կազմում էին արևելյան վիլայեթների բնակչության մեծամասնությունը, այնուամենայնիվ, քրդական մշակույթն իր բոլոր դրսևորումներով արգելվեց: Քրդերը տեսականորեն համարվելով «թուրք» գրկվում էին ազգային, իսկ գործնականում՝ ընդունվելով որպես «քուրդ»՝ քաղաքացիական իրավունքներից: Այդ քաղաքականության իրականացման համակարգում մեծ թափ է ստանում թուրքական քարոզչական ապարատի գործունեությունը, պատմագրությունը, գրականությունը, զանգվածային լրատվամիջոցները, լծվում են քրդերի՝ թուրք-օղուզական արմատները «հայտնագործելու» առաքելությանը:

«Թուրքիայի արևելյան և հարավարևելյան Անատոլիայի շրջանում տեղ-տեղ կենտրոնացած, մեծամասամբ ցրված բնակվող քրդերը ծագումով պատկանում են թուրք օղուզներին»[11]:

«Թուրքիայի հանրապետության քրդերի մեծամասնությունը խոսում է թուրքերեն և ապրում ինչպես թուրքերը: Մենք՝ թուրքերս, նրանց չենք համարում այլ ազգության ներկայացուցիչներ: Քրդերը Առաջավոր Ասիայի տարածքում ապրող թուրքական ծագումով մի ժողովուրդ են»[12]:

1920-ական թթ. Թուրքիայում ձևավորվում են քրդական մի քանի կազմակերպություններ՝ Քրդստանի ազատության կոմիտեն, Քրդստանի վերածննդի միությունը, Քրդական ազգային կուսակցությունը, Սոցիալական աջակցության քրդական միությունը[13] և ուրիշներ, որոնց անդամները հիմնականում քրդական մտավորականության և ավազակների ներկայացուցիչներ էին: Նրանցից ոմանք համագործակցում էին թուրքական իշխանությունների հետ՝ հավատալով «նոր Թուրքիայի» ստեղծման գործում քրդերի կարևոր դերակատարության մասին Աթաթուրքի տված խոստումներին: Միայն որոշ ժամանակ ետոց քրդերը սկսեցին գիտակցել, որ հայերին և հույներին կոտորելուց հետո թուրքական իշխանությունները հաշվեհարդար կտեսնեն նաև իրենց հետ՝ առանց հաշվի առնելու նրանց մահմեդականությունը և նախկին օժանդակությունները թուրքական պետությանը[14]:

Քեմալական Թուրքիայի՝ նմանատիպ քաղաքականությունը չէր կարող քուրդ ազգաբնակչության շրջանում չառաջացնել խռովություններ, որոնցից ամենազանգվածայինը 1925թ. Շեյխ Սայիդի ապստամբությունն էր: Այն բավականին ուսումնասիրված և վերլուծված է, ուստի նշենք միայն, որ թուրքական իշխանություններն ու մամլոը աղավաղեցին ապստամբության պատճառներն ու նպատակները՝ վարկարեկելով շարժման ղեկավարներին. «Սայիդը Շեյխի տեսքով, ժողովրդի կրոնական զգացմունքները օգտագործելու միջոցով հարստություն դիզած, նախիրների և հոտերի տեր մի անձնավորություն էր, որ ոչիսար էր բազմացնում և Սիրիայում վաճառում...Նրա կողմից գլխավորված ապստամբությունը (1925թ. փետրվարի 1-ից ապրիլի 15-ը) ծավալվել է Թուրքիայի

արևելյան շրջանի սի հատվածում... Շեյխ Սայիդը և էլի 47 մասնակիցներ արևելյան անկախ դատարանի կողմից դատապարտվեցին մահվան: Այն իրականացվեց Դիարբեքիրում 1925թ. հունիսի 29-ին»[15]:

Ժամանակի հայ մտավորականությունը ևս մեծ չափով արձագանքել է. ինչպես 1925թ. այնպես էլ հետագա քրդական ապստամբություններին՝ արտահայտելով իր օժանդակությունն ու համակրանքը քրդերի հակաթուրքական ազատագրական շարժումների նկատմամբ. «Քրտական այս մեծ ապստամբությունը, իր կազմակերպութեան ձեւերով, ղեկավարների ընդգրկած նպատակներով եւ շարժման ընդհանուր թափով Քիւրտիստանի ազգային ազատագրական յեղափոխութիւն մրն էր, վեր բոլոր առարկութիւններէն»[16]:

Թուրքական պատմագիտությունը խեղաթյուրում է նաև քրդական պատմության այս էջը՝ քուրդ ժողովրդի ազգային հեղափոխական վարկաբեկելով և քրդական ազգային ազատագրական շարժման ամենակարևոր երևույթներից մեկը որպես «հետադիմական, զուտ կրոնական և արտաքին ուժերի կողմից հրահրված»[17] դրակելով: Այդուհանդերձ կցանկանալինք ընդգծել, որ ապստամբության անհաջողության մատնվելու պատճառներից մեկն էլ թերևս քրդերի ազգային ինքնագիտակցության ցածր մակարդակն էր և քրդական ցեղերի ու աշիրեթների՝ միմյանց նկատմամբ թշնամանքի դրսևորումը[18]:

Ապստամբության ճնշումից հետո թուրքական իշխանությունները զանգվածային անողոք գործողություններ ծավալեցին քրդերի դեմ. «դատարանների որոշմամբ քրդերին կախաղան էին բարձրացնում, բանտ նետեցնում, աքսորում...»[19]: 1925-1926 թվականներին ավիրվում է շուրջ 206 գյուղ, այրվում 8758 տուն, սպանվում 150 հազարից ավել խաղաղ բնակիչներ՝ կանայք, ծերեր և երեխաներ[20]:

1927թ. հունիսի 10-ին ԹԱՄԺ-ը օրենք է ընդունում քրդերի՝ արևելյան վիլայեթներից արևմտյան շրջաններ տեղափոխելու վերաբերյալ. «վարչատարածքային, ռազմական և հասարակական նպատակներով կառավարության իրավունք է վերապահվում անհնազանդ ընտանիքներին տեղափոխել արևմտյան վիլայեթներ»[21]: Այդ քաղաքականության հետևանքով 1927-1928թթ. արևմուտք է տեղահանվում մոտ մեկ միլիոն քուրդ, սակայն, բնականաբար, բոլորը չէ, որ անհնազանդ և իրավարարներ էին:

1925-1938թթ. քրդական ընդվզումներն ու իրավությունները Թուրքիայում շարունակական բնույթ էին կրում: Հիշատակության է արժանի Արարատի ապստամբությունը: Այն 1927թ. կազմակերպվել և գլխավորվել է. «Խոյբուն»[22] կոմիտեի կողմից: Դաղափարախոսական և կազմակերպչական մի շարք թերություններով հանդերձ «Խոյբունը» քաղաքական կուսակցություն էր՝ իր ծրագրով և կանոնակարգով, որի գլխավոր նպա-

տակը «քուրդ ժողովրդի ազատագրումն էր թուրքական լծից և անկախ Քրդստանի ստեղծումը»[23]:

«Խոյբունի» գործունեությանը սատարում էր նաև արդեն սփյուռքում գործող Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, որը ջանում էր համախմբել քրդական ցեղերն ու աշիրեթները՝ նրանց մեջ զարգացնելով ազգային ինքնագիտակցության գաղափարը: «Խոյբուն-Դաշնակցություն» համագործակցության արդյունքում «Խոյբունի» կանոնադրության մեջ մտցվում է հայերի հետ համագործակցության վերաբերյալ ստանձին կետ[24]: Այդուհանդերձ, այս համագործակցությունը երկուստեք վտխշահավետ էր. Դաշնակցությունը ուներ հեռահար նպատակներ և դեռևս ուղիներ էր որոնում Հայաստանում իշխանությունը վերականգնելու համար: Քրդերի դեպքում խնդիրը փոքր-ինչ այլ էր. «Չկար ոչ մի կազմակերպություն ոչ մի երկրից, որը օգնություն ցույց տար Խոյբունին, նրա նկատմամբ բարեկամություն դրսևորեր: Հաշվի առնելով այդ, քրդերը նպատակահարմար գտան բարեկամանալ հայերի հետ»[25]:

Կողմերը համաձայնության էին եկել, որ Քրդստանի և Հայաստանի սահմանների հարցը կլուծեն քրդական և հայկական ապագա կառավարությունները: Նշվում էր նաև, որ կապը Խոյբունի և Արարատի ապստամբների միջև ևս իրականացրել են դաշնակցականները: 1928-1930թթ. փաստորեն բոլոր հյուսիս-արևելյան վիլայեթները գտնվում էին ապստամբների վերահսկողության տակ: Թուրքական իշխանությունները ստիպված էին կենտրոնացնել ռազմական մեծ ուժեր՝ այն ճնշելու համար[26]:

1930թ. հուլիսին ռազմական գործողություններն ավարտվեցին կառավարության լիակատար հաղթանակով: Ապստամբությանը հաջորդեցին քրդերի զանգվածային բնաջնջումներ, այրվեցին գյուղեր, մահվան դատապարտվեցին հազարավոր քրդեր[27]:

Ամփոփելով ասեք, որ Արարատի ապստամբությունը, թեև վերջնական հաղթանակի չհասավ, այնուամենայնիվ ավելի կազմակերպված բնույթ ուներ և ապացուցում էր, որ քրդական շարժումները զուտ ազատագրական էին և «ոչ մեկ օտար պետությանն հովանավորությունը կր վայելէն»[28]: Այդ ապստամբությունը նաև հայ-քրդական համագործակցության ամենահետաքրքիր դրսևորումներից մեկ է:

Անդրադառնալով քրդերի տնտեսական վիճակին՝ հարկ է նշել ակնհայտ այն իրողությունը, որ թուրքական իշխանությունները արտահայտված խտրական քաղաքականություն էին վարում քրդաբնակ շրջանների նկատմամբ: Չնայած այս վիլայեթների թույլ զարգացած վիճակին՝ կառավարությունը, որպես կանոն, այստեղ ֆինանսական ներդրումներ չէր կատարում, մինչդեռ առավելապես թուրքաբնակ շրջանները հատուկ ուշադրության էին արժանանում. և՛ ճանապարհաշինության, և կրթության, և՛ պետական զարգացման ծրագրերի միջև առկա էր տարբե-

թություն քրդաբնակ և թուրքաբնակ վիլայեթների միջև[29]: Սա, ինչ խոսք հատուկ մշակված տնտեսական քաղաքականության հետևանք էր:

1920-30-ական թվականները թուրքական կառավարության դեմ քրդական ազատագրական շարժումների տարիներ էին: Ու թեև թուրքական իշխանությունները դաժանորեն ճնշեցին այդ շարժումները, նրանց չհաջողվեց ազատվել քրդական հիմնահարցից: Այն շարունակում է գոյատևել և այսօր էլ հանդիսանում է Թուրքիայի ներքաղաքական անկայունության կարևոր գործոններից մեկը:

TATEVIK MANUKYAN

THE SOCIAL-POLITICAL CONDITIONS OF KURDS IN TURKEY (1920-1930s)

The events of 1920-1930's are the most remarkable in Kurd's history. For the first time during the history of Kurds after the seal of Severe's convention it became touchable for the Kurds the perspective of the creation of independent Kurdistan. However because of Kurds own mistakes and with the influence of external factors the Kurdish question in Lozano's (Lasagna's) conference stayed out of the day program of International Diplomacy. We would like to accent also that due to Turkey's carried out double standard effective policy Turkey succeeded in even though temporally solving the Kurdish problem.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Аванесов С.С. "Положение национальных меньшинств в Турциии", Ереван, 1963, с. 49.
2. Beşikçi I.,Kürdistan üzerinde emperiyalist bölüşüm mücadelisi,1915-1925,cilt 1, Ankara, 1992,s. 396
3. Аралов С.И. "Воспоминания советского дипломата", М.1960, с.107.
4. Ключников Ю.В. "Мирные договоры империалистической войны", отдел III, "Курдистан", М. 1925, с. 122.
5. Բայբուրդյան Վ., Հայ-քրդական հարաբերությունները Հայաստանի առաջին հանրապետության գոյության տարիների, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ.XX, Երևան 2001,էջ 36.
6. Büyük lugat ve ansiklopedi, S. Kılıclıoglu, N. Araz, H. Devrim, eilt XI, Istanbul, 1985
7. Ш.Х. Мгои, Севр-Лозанна и проблемы национального самоопределения курдов, "Курдский альманах", М. 2001, с. 20-21.
8. Курдское движение в новое и новейшее время, М. 1987, с. 99.
9. Ключников Ю.В. "Мирные договоры империалистической войны", отдел VI, М. 1925, с. 151-152.
10. Гасратян М.А. Курды Турции в новейшее время, Ереван 1990, с. 55.

11. Türkiye ansiklopedisi, M.E. Üzümeri, S.Dinçer, S. Kazancı, cilt- III,, Ankara 1956, s. 512
12. Büyük luğat ve ansiklopedi, S. Kılıclıoğlu, N. Araz, H. Devrim, cilt VIII, Istanbul, 1985, s.735.
13. McDowall D., A Modern history of the kurds, London- NewYork, 2000
14. Բայբուրդյան Վ., XX դարի 20-30-ական թվականների քրդական ապստամբությունները և թուրք-իրանական հարաբերությունները, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, h.XXI, Երևան 2002,էջ 9.
15. Büyük luğat ve ansiklopedi, S. Kılıclıoğlu, N. Araz, H. Devrim, cilt XI, Istanbul, 1985, s.772.
16. Սասունի Կ. Քիւրտ ազգային շարժումները և հայ-քրտական յարաբերութիւնները, Պէյրութ, 1969, էջ 251
17. Büyük luğat ve ansiklopedi, S. Kılıclıoglu, N. Araz, H. Devrim, cilt XI, Istanbul, 1985, s.772
18. Ապստամբությանը, չնայած իր ընդգրկած մասշտաբներին, չէին մասնակցում մի շարք ազդեցիկ քուրդ ցեղապետեր՝ Իսմայել Աղա Սիմկոն, շեյխ Մահմուդը և ուրիշներ, չէին մասնակցում նաև որոշ ցեղեր, մասնավորապես՝ լոլան, խորմեկ և Դերսիմի քրդերը, որոնք չէին հավատում ապստամբության հաղթանակին և օժանդակում էին թուրքական իշխանություններին: Կարևոր դեր էր խաղում և քրդական ցեղերի կրոնական տարբերությունները:
19. Armstrong H.C.,Grey Wolf, Mustafa Kemal, London,1934, p.26
20. Гасратян М.А., Курдская проблема в Турции (1925-1939гг.), Специальный бюллетень но. 6, М.,1975, с.52, տե՛ս նաև Rambout L., Les Kurds et le droit, Paris,1947, p.28.
21. Гасратян М.А. Курды Турции в новейшее врамя,, Ереван 1990, с. 128
22. 1927թ. գարնանը Սիրիայում և Լիբանանում գումարված քրդական կազմակերպությունների համագումարում ստեղծվում է «Խոյբուն» («անկախություն» կամ, այլ տեսակետի համաձայն՝ «լինել ինչպես կաս») անվամբ Քրդական ազգային կոմիտեն: Մշակվում է վերջինիս գործունեության ծրագիրը և կանոնադրությունը: «Խոյբունի» նախաձեռնությամբ ապստամբությունը կազմակերպվում է Արարատի ստորոտում: Այն գլխավորում էին Իբրահիմ Հսգե Թելլի փաշան, Իհսան Նուրի փաշան և Զիլան բեյը, որն ըստ Կ.Սասունու խնուսցի Արտաշես Մուրադյանն էր, որ ներկայացնում էր հայկական թևը:
23. Никитин В., Курды, М.,1964, с. 294.
24. Բայբուրդյան Վ., նշվ. աշխ., էջ 14.
25. Гасратян М.А. Курды Турции в новейшее врамя,, Ереван 1990, с. 154, տե՛ս նաև Silopi Z., Doza Kurdistan, 1969
26. История Курдистана, М.,1999, с. 283-284
27. Jwaideh W., Kürt Milliyetçiliğinin tarihi, Istanbul, 1999, s. 412

28. Սասունի Կ. Քիւրտ ազգային շարժումները և հայ-քրտական յարաբերութիւնները, Պէյրութ, 1969, էջ 295:
29. Արևելյան վիլայեթների տնտեսական վիճակի մասին առավել մանրամասն տես Դալուատյան Հ., Հանրապետական Թուրքիայի կառավարության քաղաքականությունը Արևելյան վիլայեթներում (1920-1960-ական թվականներ), Երևան, 1999: